

**ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե**

**Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ 35/4**

**22 նոյեմբերի 2016թ.**

Քննարկվեց քաղաքացի Մելինե Մելիքյանի գանգատը ՀՀ ԿԱ ՊԵԿ Վանաձորի ՏՀՏ կողմից ավելացված արժեքի հարկի գծով պարտավորություններ հաշվարկելու դեմ:

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ կառավարության 30.12.2010թ. թիվ 1775-Ն որոշմամբ սահմանված կարգով ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեից ստացված անշարժ գույքի և դրա նկատմամբ գրանցված իրավունքների վերաբերյալ տեղեկությունների համաձայն համապարտ պարտավորություն կրող ֆիզիկական անձ Մելինե Մելիքյանի կողմից օտարվել է ք.Վանաձոր, Մյասնիկյան 6 հասցեում գտնվող հասարակական նշանակության անշարժ գույքը: Մասնավորապես, Ալիկ Ղազարյանի, Մելինե Մելիքյանի (վաճառող) և Հովհաննես Կարոյանի, Ռուզաննա Մառանջյանի (գնորդ) միջև 12.11.2014թ-ին կնքվել է «Անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր» (այսուհետ նաև՝ Պայմանագիր):

Պայմանագրի 1-ին կետի համաձայն վաճառողը վաճառում է, իսկ գնորդը, որպես սեփականություն ձեռք է բերում Վանաձոր քաղաքի Մյասնիկյան փողոցի թիվ 6 հասցեում գտնվող անշարժ գույքը՝ խանութ, որը բաղկացած է 89.41 քմ ընդհանուր մակերեսից, այսուհետ՝ անշարժ գույք:

Պայմանագրի 3-րդ կետի համաձայն անշարժ գույքի վաճառքի գինը կազմել է 74.700.000 ՀՀ դրամ: Արդյունքում Վանաձորի ՏՀՏ կողմից հաշվարկվել են հարկային պարտավորություններ, ընդհանուր գումարով 6.943.326 դրամ:

Սույն գործին առնչվող փաստական հանգամանքների ուսումնասիրության և գնահատման արդյունքում Հանձնաժողովը եկավ եզրակացության, որ Ակտի դեմ բերված գանգատի վերաբերյալ իրավաչափ որոշում կայացնելու համար անհրաժեշտ է լրացուցիչ տեղեկատվություն ստանալ սույն գործին անմիջականորեն առնչվող փաստական հանգամանքների վերաբերյալ:

Ելնելով վերոգրյալից, ինչպես նաև ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի դրույթներով՝ Հանձնաժողովը գտնում է, որ գանգատի հիման վրա հարուցված վարչական վարույթը ենթակա է կասեցման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի, «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

**ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝**

Քաղաքացի Մելինե Մելիքյանի գանգատի հիման վրա հարուցված վարչական վարույթը կասեցնել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել տեսչական մարմինների միասնական բողոքարկման հանձնաժողով կամ ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ